



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Արդյունաբերական սեփականություն

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

No 1 (29)

ՄԱՍ 1
ЧАСТЬ 1

Агентство интеллектуальной собственности
Республики Армения

**ПРОМЫШЛЕННАЯ
СОБСТВЕННОСТЬ**

Официальный бюллетень

Սույն տեղեկագրում զետեղված տեղեկությունները համարվում են
հրապարակված 2004 թվականի մարտի 17-ից

Երեւան 2004

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ 1

ԳՅՈՒՏԵՐ	5, 75
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	7, 77
ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ	23, 91
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	25, 93
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՍՈՒՇՆԵՐ	27, 95
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	29, 97
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	31
Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին	33
ՑՈՒՑԻՉՆԵՐ	63
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	67
ԵՐԿՏԱՌ ԿՈԴԵՐԸ	98

ՄԱՍ 2

ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ	5
Տեղեկություններ 2000թ-ին գրանցված ֆիրմային անվանումների հայտերի մասին	7

Հրատարակվում է Մտավոր սեփականության
գործակալության կողմից 1995թ.

Издаётся Агентством интеллектуальной
собственности с 1995г.

375010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563-258 հայտերի ընդունման բաժին
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական
ապահովման բաժին

375010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
Тел. 563-258 отдел приема заявок
Тел. 561-126 отдел информационно-технологического
обеспечения

Internet: <http://www.armpatent.org>
E-mail: armpat@cornet.am

СОДЕРЖАНИЕ

ЧАСТЬ 1	
ИЗОБРЕТЕНИЯ	5, 75
Сведения о выданных патентах	7, 77
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ	23, 91
Сведения о выданных патентах	25, 93
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ	27, 95
Сведения о выданных патентах	29, 97
ТОВАРНЫЕ ЗНАКИ	31
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	33
УКАЗАТЕЛИ	63
СООБЩЕНИЯ	67
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ	98

ЧАСТЬ 2	
ФИРМЕННЫЕ НАИМЕНОВАНИЯ	5
Сведения о зарегистрированных заявках фирменных наименований в 2000г.	7

CONTENTS

PART 1	
INVENTIONS	
Information on granted patents	
UTILITY MODELS	
Information on granted patents	
INDUSTRIAL DESIGNS	
Information on granted patents	
TRADE MARKS	
Information on registered trade marks and service marks	
INDEXES	
REPORTS	
TWO-LETTER CODES	

PART 2	
TRADE NAMES	
Information on registrated firm name's applications in 2000.	

ԳՅՈՒՏԵՐ

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման միջազգային կոդերը
ըստ ՄՄՅԿ ST.9 ստանդարտի**

11	արտոնագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը
	A1 Գյուտի հիմնական արտոնագիր
	A2 Գյուտի նախնական արտոնագիր
	B2 Նախնական արտոնագրով նախկինում պահպանված գյուտի հիմնական արտոնագիր
21	հայտի համարը
22	հայտի ներկայացման թվականը
23	լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն
24	արտոնագրով վերապահված իրավունքների գործողության սկիզբը
31	առաջնային հայտի համարը
32	առաջնային հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
42	հայտը համընդհանուր ծանոթացման դնելու թվականը
44	գյուտի նախնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
45	գյուտի հիմնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51	միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54	գյուտի անվանումը
56	տեղեկատվության աղբյուրներ
57	գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
62	ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
65	հայտին վերաբերող ավելի վաղ հրապարակված արտոնագրային փաստաթղթի համարը
71	հայտատուն, երկրի կոդը
72	գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը
73	արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար
85	միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
86	միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը
87	միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

- (51) 7 A01G 9/24 (11) 1399 (13) A2
(21) P20020222 (22) 25.12.2002
(42) 13.05.2003
(71) Կարեն Ալեքսանդրյան (AM), Ռոբերտ Խանոյան (AM)
(72) Կարեն Ալեքսանդրյան (AM), Ռոբերտ Խանոյան (AM)
(73) Կարեն Ալեքսանդրյան, Երեւան, Տերյան 59, բն. 20 (AM), Ռոբերտ Խանոյան, Երեւան, Խանջյան 37, բն. 5 (AM)
(54) Ջերմոց
(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական կառույցների բնագավառին, մասնավորապես՝ ջերմոցային շինություններին եւ դրանց ջեռուցման համակարգերին:
Ջերմոցն ունի հիմնականապես, լուսաթափանցիկ ծածկույթ, վերգետնյա լուսավոր եւ ստորգետնյա մութ հարկաբաժիններ: Ստորգետնյա հարկաբաժինների հատակը, պատերը եւ միջհարկային ծածկերն ունեն ջեռուցման տարրեր, իսկ միջհարկային ծածկերում կան բացվածքներ՝ ազատ կոնվեկցիայի սկզբունքով հարկերի միջեւ ջերմա- եւ օդափոխանակության համար՝ ներառյալ վերգետնյա հարկաբաժնի ազատ թթվածին տեղափոխումը ստորգետնյա հարկաբաժնի եւ ստորգետնյա հարկաբաժինների ածխաթթու գազի տեղափոխումը վերգետնյա հարկաբաժնի:
Ընդլայնվում են ջերմոցային մակերեսները, նվազեցվում է էներգակիրների ծախսը, 1 նկ.:

սահմաններում, ընդ որում ջրթողի գլանաձեւ իրանը իրականացված է ծակոտկենություն ունեցող քարատեսակից, որի մեջ փորված խոռոչում տեղակայված է ասեղային փականով լողան:

Բարձրանում է ենթահողային ոռոգման արդյունավետությունը, 2 նկ.:

- (51) 7 A01J 25/12 (11) 1401 (13) A2
A01J 25/15
(21) P20030053 (22) 18.04.2003
(42) 11.08.2003
(71) Անահիտ Բեգլարյան (AM)
(72) Ռուբեն Ալեքսանյան (AM), Անահիտ Բեգլարյան (AM), Շավարշ Գրիգորյան (AM), Ռազմիկ Բեգլարյան (AM), Վլադիմիր Յովհաննիսյան (AM)
(73) Անահիտ Բեգլարյան, Երեւան, Բաշինջաղյան 171, բն. 36 (AM)
(54) Պանրազանգվածի ձեւավորման եղանակ
(57) Գյուտը վերաբերում է կաթի արդյունաբերությանը, մասնավորապես պանրի արտադրությանը: Գյուտի էությունը կայանում է նրանում, որ պանրի զանգվածը շիճուկի հետ ինքնահոս կամ պոմպի օգնությամբ լցնում են գլանաձեւ ծակոտկեն աշտարակի մեջ եւ վիբրացիայի ենթարկում, որից հետո ինքնահոս կերպով լցնում կաղապարների մեջ:
Բարձրանում է արտադրության արդյունավետությունը, իջնում է ինքնարժեքը:

- (51) 7 A01G 25/06 (11) 1400 (13) A2
(21) P20030011 (22) 06.02.2003
(42) 13.05.2003
(71) Գեորգ Աֆյան (AM), Գեղամ Նավոյան (AM)
(72) Գեորգ Աֆյան (AM), Գեղամ Նավոյան (AM), Արթուր Ավետիսյան (AM), Հայսեր Պողոսյան (AM)
(73) Գեորգ Աֆյան, Երեւան, Ազատության 20, բն. 28 (AM), Գեղամ Նավոյան, Երեւան, Տիգրան Մեծի 36, բն. 103 (AM)
(54) Ենթահողային ոռոգման ավտոմատ ջրթող
(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսությանը եւ կարող է օգտագործվել մշակաբույսերի ենթահողային ոռոգման նպատակով: Առաջարկված ենթահողային ոռոգման ավտոմատ ջրթողը սնվում է ոչ ճնշումային ջրտար խողովակից եւ տեղադրված է բույսի արմատային համակարգի

- (51) 7 A21D 13/08 (11) 1402 (13) A2
(21) P20030074 (22) 16.06.2003
(42) 11.07.2003
(71) Կարլեն Մկրտչյան (AM)
(72) Կարլեն Մկրտչյան (AM)
(73) Կարլեն Մկրտչյան, Երեւան, Իսակովի պող. 4/2, բն. 6 (AM)
(54) Պաքսիմատի պատրաստման եղանակ
(57) Գյուտը վերաբերում է սննդային արդյունաբերությանը, մասնավորապես՝ պաքսիմատի պատրաստման եղանակներին:
Ըստ հայտարկվող եղանակի պաքսիմատի պատրաստման համար որպես հաց օգտագործում են հայկական լավաշը:
Չոր լավաշը ցրցողում են ջրով, կտրատում, չորացնում, 3-5 րոպեի ընթացքում տապակում մինչեւ 150-170°C ջերմաստիճան տաքացրած

բուսական յուղի մեջ, դասավորում սկսվողի վրա եւ համեմուն սննդային հավելանյութերով:

Պարզեցվում է պաքսիմատի պատրաստման եղանակը եւ ընդլայնվում է պաքսիմատների տեսականին:

(51) 7 A23C 19/02 (11) 1403 (13) A2
A23C 19/055
A23C 19/06
A23C 19/08

(21) P20030081 (22) 26.06.2003
(42) 11.09.2003

(71) Մարինա Կարախանյան (AM)

(72) Մարինա Կարախանյան (AM), Ռազմիկ Բեգլարյան (AM), Ֆլորա Տխրունի (AM), Ծովինար Բալաբեկյան (AM), Յերմինե Համբարձումյան (AM)

(73) Մարինա Կարախանյան, Երեւան, Ավան-Առինջ, 1-ին միկրոշրջան 2/8, բն. 16 (AM)

(54) Հալած պանրի պատրաստման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է պանրագործությանը, մասնավորապես՝ հալած պանրի պատրաստման եղանակներին:

Ըստ հայտարկվող եղանակի կաթը պատրաստվում են, մակարդում կալցիումի աղերի, ֆերմենտների եւ 5-10% քաղցուի առկայությամբ: Ստացված մակարդուկը կտրատվում են, հեռացնում շիժուկը, կատարում են պանրազանգվածի մամլում եւ հալում 80-85°C ջերմաստիճանում: Այնուհետեւ հալած պանրազանգվածը սառեցնում են մինչեւ 65-70°C ջերմաստիճան եւ ավելացնում են *Lactobacillus acidophilus* 1991 շտամից ստացված սպիտակուցային խտանյութը 0.5-1% չափով:

Ապահովվում է պանրազանգվածի արագ հասունացումը եւ պանրի պահպանման ժամկետի երկարացումը:

(51) 7 A23L 1/312 (11) 1404 (13) A2
A23L 1/314
(21) P20030044 (22) 28.03.2003
(42) 11.07.2003

(71) Աննա Դաշտոյան (AM)

(72) Աննա Դաշտոյան (AM), Ռազմիկ Բեգլարյան (AM), Վլադիմիր Հովհաննիսյան (AM), Էմմա Սահակյան (AM)

(73) Աննա Դաշտոյան, Երեւան, Լյուքսեմբուրգի 5, բն. 9 (AM)

(54) Տավարի լեզվից պատրաստվածքի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է սննդի արդյունաբերությանը, մասնավորապես՝ տավարի լեզվից պատրաստվածքների ստացման եղանակներին:

Ըստ հայտարկվող եղանակի տավարի լեզուն աղադրում են, եփում, 3 օրվա ընթացքում մամլում 2-4°C ջերմաստիճանում, 1 ժամվա ընթացքում ապխտում 60°C ջերմաստիճանում եւ չորացնում: Այնուհետեւ լեզուն չամանապատում են եւ չորացնում: Ընդ որում, աղադրման փուլում ավելացնում են լրացուցիչ Vitasol F6 MAX տեսակի սոյայի հիդրոլիզատ:

Բարձրանում են պատրաստվածքի ելքը եւ որակը:

(51) 7 A24D 3/14 (11) 1405 (13) A2
(21) P20030050 (22) 16.04.2003
(42) 11.07.2003

(71) Սարգիս Վարդանյան (AM), Արթուր Ղազարյան (AM)

(72) Սարգիս Վարդանյան (AM), Արթուր Ղազարյան (AM)

(73) Սարգիս Վարդանյան, Երեւան, Մոսկովյան փող. նրբ. 50 (AM), Արթուր Ղազարյան, Երեւան, Մոսկովյան փող. նրբ. 50 (AM)

(54) Ծխախոտի գտիչ

(57) Գյուտը վերաբերում է ծխախոտային արդյունաբերությանը, մասնավորապես՝ ծխախոտի գտիչներին:

Ձտիչի թելքավոր հիմքը, որը կարող է լինել ացետատային կամ ցելյուլոզ պարունակող, պատված է ակտիվացրած ցեոլիթի 0,1 մմ չզերազանցող ֆրակցիայի փոշով: Նվազեցվում են նիկոտինային եւ խեժային բաղադրիչները ծխախոտի ծխում:

(51) 7 A44C 17/00 (11) 1406 (13) A2
(21) P20030041 (22) 26.03.2003
(42) 11.06.2003

(71) Ալեքսան Արզումանյան (AM)

(72) Ալեքսան Արզումանյան (AM)

(73) Ալեքսան Արզումանյան, Գյումրի, Հ. Ղանդիլյան 47, բն. 5 (AM)

(54) Կլոր ադամանդի միստավորման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է թանկարժեք եւ կիսաթանկարժեք քարերի միստավորման բնագավառին:

Գյուտի էությունը կայանում է նրանում, որ կլոր ադամանդի թագի եւ տաղավարի վրա մշակում են ութական հավասարաչափ միստեր, ռունդիստ եւ հարթակ, ապա գյուտի համաձայն, այդ միստերի վրա մեկընդմեջ մշակում են համապատասխանաբար երկու եւ երեք հավասար անկյուններ ունեցող միստեր:

Բարձրանում է միստավորված ադամանդի շողարկման հնարավորությունը, 3 նկ.:

- (51) 7 A61C 8/00 (11) 1407 (13) A2
 (21) P20030078 (22) 19.06.2003
 (42) 11.09.2003
 (71) Կարեն Գրիգորյան (AM)
 (72) Կարեն Գրիգորյան (AM), Լիլիթ Թումանյան (AM)
 (73) Կարեն Գրիգորյան, Երեւան, Վարդանանց 5ա, բն. 352 (AM)
 (54) Պտուտակային իմպլանտատների տեղակայման եղանակ եւ դրա իրականացման մոնիտորինգ

(57) Գյուտը վերաբերում է ստոմատոլոգիական վիրաբուժությանը, մասնավորապես՝ պտուտակային իմպլանտատների տեղակայման համար ծնոտներում ոսկրանցքերի նախապատրաստման եղանակներին եւ սարքերին:

Գյուտի էությունը կայանում է նրանում, որ հարատիչի (մոնիտորինգ) օգնությամբ կտրում եւ շերտազատում են լորձաթաղանթ՝ վերն-ոսկրային լաթը շրջանագծի մոտավորապես 3/4 չափով, կատարում են ոսկրանցքի ծեւավորում, ստացված անցքում կատարում պարուրակահանում համապատասխան տրամագծի ներպտուտակիչով, տեղակայում իմպլանտատը եւ ներպտուտակում օբտուրացիոն (փակիչ) պտուտակը: Օբտուրացիոն պտուտակի տեղակայումից հետո լաթը վերադարձնում են նախկին դիրքին եւ ամրացնում մեկ կամ երկու կարով: Մոնիտորինգ իրանը սրված աշխատանքային եզրի մասում ունի փորվածք՝ շրջանագծի մոտավորապես 1/4 չափով:

Նվազեցվում է հետվիրաբուժական բարդությունների վտանգը՝ բերանի խոռոչի միջավայրի հետ իմպլանտատի շփումը վերացնելու միջոցով, 2 անկախ կետ, 2 նկ.:

- (51) 7 A61C 8/00 (11) 1408 (13) A2
 (21) P20030077 (22) 19.06.2003
 (42) 11.09.2003
 (71) Լիլիթ Թումանյան (AM)
 (72) Կարեն Գրիգորյան (AM), Լիլիթ Թումանյան (AM)
 (73) Լիլիթ Թումանյան, Երեւան, Վարդանանց 5ա, բն. 352 (AM)
 (54) Ամբողջաձույլ կամրջածել պրոթեզների մետաղաձույլ շապիկների պատրաստման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է ստոմատոլոգիային, մասնավորապես՝ ամբողջաձույլ կամրջածել պրոթեզների պատրաստման եղանակներին: Ժամանակավոր շապիկների ստացումից հետո չպատրաստուկավորված ատամի նախնական արտատպվածքի օգնությամբ ստանում են լրացուցիչ շապիկներ, իսկ ամբողջաձույլ կամրջածել պրոթեզի պատրաստման ընթացքում

ստացված լրացուցիչ շապիկները տեղադրում են մշակված ատամների գիպսե մոդելների վրա՝ ատամի վզիկի (սանդղածել խորշի) շրջանում դրանց ճշգրտումով: Լրացուցիչ շապիկները պատրաստում են անմոխիր պլաստմասսայից:

Արագացվում է կամրջածել պրոթեզին հիվանդի հարմարվելը՝ մինչեւ պատրաստուկավորումը ատամի անատոմիական ձեւի ճշգրիտ կրկնության ապահովման միջոցով:

- (51) 7 A61D 1/00 (11) 1409 (13) A2
 A61P 33/10
 (21) P20030086 (22) 07.07.2003
 (42) 11.09.2003
 (71) Հենրիկ Բադեյան (AM), Սերգեյ Տոնականյան (AM), Վարդուհի Հակոբյան (AM)
 (72) Հենրիկ Բադեյան (AM), Սերգեյ Տոնականյան (AM), Վարդուհի Հակոբյան (AM)
 (73) Հենրիկ Բադեյան, Երեւան, Արաբկիրի 43-րդ փող. 19(AM), Սերգեյ Տոնականյան, Երեւան, Նալբանդյան 50, բն. 4 (AM), Վարդուհի Հակոբյան, Երեւան, Սողոմոնյան 30/1, բն. 15 (AM)
 (54) Ոչխարների ֆասցիոլոգի բուժման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է անասնաբուժությանը, մասնավորապես՝ ոչխարների ֆասցիոլոգի բուժման եղանակներին:

Ֆասցիոլոգով հիվանդ ոչխարների ճիճվաթափությունը կատարում են մսուրային շրջանին անցնելուց 15 օր անց՝ ներմուծելով միանվագ ացեմիդոֆենի եւ հեքսիթոլի համակցված դեղախառնուրդը, ընդ որում այն ներմուծում են 0,1 գ ացեմիդոֆենի եւ 0,15գ հեքսիթոլի՝ 1 կգ մարմնի զանգվածի չափաքանակներով:

Այդպիսի չափաքանակներով դեղախառնուրդի օգտագործումը ապահովում է բարձր հակահեղմնատային ակտիվություն՝ ֆասցիոլաների սեռահասուն եւ դրան մոտ գտնվող ձեւերի նկատմամբ:

- (51) 7 A61F 2/06 (11) 1410 (13) A1
 (21) P20010032 (22) 28.02.2001
 (42) 20.11.2001
 (31) 09/516753 (32) 01.03.2000 (33) US
 60/202723 08.05.2000 US
 (71) Մեդինոլ Լթդ.(IL)
 (72) Գրեգորի Փինչասիթ(IL), Յակոբ Ռիխտեր(IL)
 (73) Մեդինոլ Լթդ.(IL)
 (74) Հ. Դավթյան
 (54) Երկայնքով ճկվող ստենտ
 (57) Գյուտը վերաբերում է բժշկական տեխնիկային, մասնավորապես՝ ներանոթային ստենտներին, որոնք նախատեսված են զարկերակի կոր տեղամասերում ներդնելու համար:

Ստենտը ձեւավորված է միահյուսված ոլորապատույտ նախշանկարներից, որոնք կազմում են բազմաթիվ եռանկյունաձեւ բջիջներ: Եռանկյունաձեւ բջիջները հարմարեցված են շառավղային հենարանի հատկություն առաջացնելու, ինչպես նաեւ ընդարձակումից հետո երկայնական ճկունություն ապահովելու համար: Եռանկյունաձեւ բջիջներն ունեն ամոթի պատը ավելի շատ ծածկելու հատկություն:

Ստենտը կարող է ունենալ տարբեր տեղամասեր, որոնք հարմարեցված են երկայնական ճկունության լավարկման համար: Ստենտի ներդրման ընթացքում կանխվում է ոլորապատույտ նախշանկարների օղակների «դուրս ընկնելը», 8 անկախ կետ, 13 նկ.:

- (51) 7 A61F 2/06 (11) 1411 (13) A2
(21) P20020189 (22) 13.06.2001
(42) 13.05.2003
(31) 60/211642 (32) 14.06.2000 (33) US
(85) 14.11.2002
(86) PCT/IL01/00543, 13.06.2001
(87) WO 01/95833 20.12.2001
(71) Մեդինոլ Լթդ.(IL)
(72) Յակոբ Ռիխտեր(IL)
(73) Մեդինոլ Լթդ.(IL)
(74) Յ. Դավթյան
(54) Բալոնային կաթետերով ստենտ եւ դրա ներդրման եղանակ
(57) Գյուտը վերաբերում է բժշկական տեխնիկային, մասնավորապես բալոնային կաթետերով ստենտներին եւ դրանց ներդրման եղանակներին: Ստենտը տեղադրված է երկու համակենտրոն բալոններով կաթետերի վրա: Ներքին բալոնի երկարությունն ավելի փոքր է, քան արտաքին բալոնի ու ստենտի երկարությունները: Այն ունի խզման ավելի ցածր ճնշում, քան արտաքին բալոնը: Ստենտը ներդնելու համար կաթետերը հասցնում են մինչեւ ամոթի տրված հատվածը, ներքին բալոնի ներքին մակերեսային ճնշում են կիրառում՝ ընդարձակելով այն եւ տեղադրելով ստենտը: Ճնշման հետագա ավելացման հետեւանքով ներքին բալոնը խզվում է: Քանի որ արտաքին բալոնը շրջապատում է ներքին բալոնը, ապա ճնշումը հաղորդվում է արտաքին բալոնին, որն ընդարձակվելով ընդարձակում է ստենտը ամբողջ իր երկարությամբ: Բալոնները կարող են օդազրկվել եւ հեռացվել՝ թողնելով ներդրված ստենտը անոթում: Ապահովվում է ստենտի հավասարաչափ ընդարձակումը ամբողջ երկարությամբ՝ ծայրերը ներառյալ, 2 անկախ կետ, 3 նկ.:

- (51) 7 A61M 29/00 (11) 1412 (13) A2
(21) P20020152 (22) 06.09.2002
(42) 11.04.2003
(31) 60/317185 (32) 06.09.2001 (33) US
(71) Մեդինոլ Լթդ.(IL)
(72) Գրեգորի Փինչասիք(IL)
(73) Մեդինոլ Լթդ.(IL)
(74) Յ. Դավթյան
(54) Հոծ հողավորված ստենտ եւ դրա պատրաստման եղանակ
(57) Գյուտը վերաբերում է բժշկական տեխնիկային, մասնավորապես՝ արյունատար անոթներում ներդրվող ստենտներին: Ստենտն ունի հաջորդաբար տեղակայված բազմաթիվ ստենտային սեգմենտներ, որոնք մեկը մյուսից գտնվում են հեռավորության վրա: Երկու հարեւան սեգմենտների միջեւ կա անջատման տիրույթ, որն ունի հողավորման երկու հարթություն: Հողավորման յուրաքանչյուր հարթության մեջ կան երկուական միացնող տարրեր: Մեկ հողավորման հարթության տարրերը մյուս հողավորման հարթության տարրերի նկատմամբ ստենտի շրջագծով շեղված են 60-140 աստիճանով: Հողավորման հարթության երկու տարրերը միմյանց նկատմամբ շեղված են 140-220 աստիճանով:

Ապահովվում է ճկման նկատմամբ դիմադրողականության նվազագույն կորուստ՝ նույնիսկ ստենտի մեծ երկարության դեպքում, 2 անկախ կետ, 6 նկ.:

- (51) 7 B23Q 15/22 (11) 1413 (13) A2
H05K 13/04
(21) P20030033 (22) 17.03.2003
(42) 11.06.2003
(71) «Մշակ» ՓԲԸ(AM)
(72) Լեւոն Պողոսյան(AM), Վլադիմիր Պողոսյան(AM)
(73) «Մշակ» ՓԲԸ, Երեւան, Յ.Յակոբյան 3(AM)
(74) Ա. Պետրոսյան
(54) Առարկայական սեղանի տեղափոխության սարք
(57) Գյուտը վերաբերում է X եւ Y առանցքներով կոորդինատային տեղափոխությունների եւ Z առանցքի շուրջը դարձի սարքերին եւ կարող է կիրառվել բազմաշերտ տպատախտակների եւ միկրոնոդուլների արտադրության մեջ:
Առարկայական սեղանի տեղափոխության սարքն ունի X տեղափոխությունների առաջին եւ երկրորդ զույգված ուղղորդիչներ, որոնք տեղակայված են հիմքի վրա X առանցքին զուգահեռ: Համապատասխան X ուղղորդիչների վրա տեղակայված են առաջին եւ երկրորդ գծային էլեկտրաշարժիչների շարժուն բլոկները, իսկ երրորդ գծային էլեկտրաշարժիչի շարժուն

բլոկը տեղակայված է առաջին X ուղղորդիչի վրա: X ուղղորդիչներից յուրաքանչյուրն ունի գծային էլեկտրաշարժիչի մագնիսական շափող եւ գծային էնկոդեր: Սարքն ունի նաեւ Y տեղափոխությունների ուղղորդիչներ, որոնք տեղակայված են առաջին եւ երրորդ գծային էլեկտրաշարժիչների շարժումն բլոկների վրա եւ կողմնորոշված են X առանցքի նկատմամբ 30° անկյան տակ եւ միմյանց նկատմամբ 120° անկյան տակ, իսկ երկրորդ գծային էլեկտրաշարժիչի շարժումն բլոկի վրա տեղակայված Y ուղղորդիչները զուգահեռ են Y առանցքին: Y ուղղորդիչների վրա տեղակայված են առարկայական սեղանի շարժումն սայլակի հետ հողակապորեն կապված շարժումն սողաններ:

Բարձրացվում է սարքի ճշգրտությունը, 2 Գլ.:

-
- (51) 7 B24B 53/14 (11) 1414 (13) A2
(21) P20030092 (22) 18.07.2003
(42) 11.09.2003
(71) Մաքսիմ Գրիգորյան(AM), Տիգրան Գրիգորյան(AM), Գուրգեն Անդրանիկյան(AM)
(72) Մաքսիմ Գրիգորյան(AM), Տիգրան Գրիգորյան(AM), Գուրգեն Անդրանիկյան(AM)
(73) Մաքսիմ Գրիգորյան, Երեւան, Ս.Տարոնցունրբ. 4, բն. 1(AM), Տիգրան Գրիգորյան, Երեւան, Ս. Տարոնցուն փող. 3/1, բն. 7(AM), Գուրգեն Անդրանիկյան, Սյունիքի մարզ, Գորիս, Ավանգարդ թաղ., Սեւյան կոտեջ 1, բն.
(54) Ալմաստահղկանյութային գործիք
(57) Գյուտը վերաբերում է ալմաստահղկանյութային գործիքներին, որոնք նախատեսված են որդնակային հղկաքարերի ուղղման համար: Որդնակային հղկաքարի ուղղման ալմաստահղկանյութային գործիքը սկավառակաձեւ է, ունի դեպի ծայրամասը շեղված ալմաստակիր շերտով մակերեսություններ, որոնք առաջացնում են անկյունային պրոֆիլի շրջանային ատամ: Համաձայն գյուտի, գործիքի աշխատանքային մակերեսություն ունի շրջանային ատամների հաջորդական համառանցք շարք, ատամների քայլը հաստատուն է եւ հավասար է որդնակի ատամների քայլին: Շրջանային ատամների թիվը հավասար է ուղղման վերջնամաքիչ անցումների թվին, ընդ որում էլեկտրակորունդե որդնակային հղկաքարի ուղղման համար ատամների թիվը հավասար է չորսի:
Բարձրանում են գործիքի տեխնոլոգիական հնարավորությունները, 3 Գլ.:
-

- (51) 7 B26F 1/04 (11) 1415 (13) A2
H05K 3/00
(21) P20030010 (22) 31.01.2003
(42) 11.04.2003
(71) «Մշակ» ՓԲԸ(AM)
(72) Լենոն Պողոսյան(AM), Վլադիմիր Պողոսյան(AM), Միխայիլ Մոսեսով(AM), Արամայիս Սուսանյան(AM)
(73) «Մշակ» ՓԲԸ(AM)
(74) Ա. Պետրոսյան
(54) Խեցե թաղանթների ծակատման սարք
(57) Գյուտը վերաբերում է ծակատման սարքերին եւ կարող է կիրառվել էլեկտրոնային սարքերի բազմաշերտապատախտակների արտադրության մեջ:

Սարքի մամլամայրերի եւ մամլամատների զուլակների միջեւ կա ծակատվող թաղանթի անցման բացակ: Բացակի նախադրման մեխանիզմը կազմված է X առանցքի շուրջը դարձկեն թիթեղից, որն ունի մամլամատների անցման անցքեր, զսպանակված հրիչներից, որոնց առանցքները զուգահեռ են մամլամատների առանցքներին, եւ դարձկեն շարժահաղորդ լծակներից իրենց դարձի սահմանափակիչներով, ընդ որում հրիչները իրենց մեկ ծայրերով հողակապված են դարձկեն թիթեղի հետ, իսկ մյուս ծայրերով հպակվում են շարժահաղորդ լծակների թելերին: Դարձկեն թիթեղը II-աձեւ է, իսկ մամլամայրերի զուլակին նայող մամլամատների զուլակի մակերեսությին կա երկայնական փորակ, որի մեջ տեղավորված է II-աձեւ դարձկեն թիթեղի վերադրակը:

Բարձրացվում է սարքի արագագործությունը, 5 Գլ.:

-
- (51) 7 B26F 1/04 (11) 1416 (13) A2
H05K 3/00
(21) P20030009 (22) 29.01.2003
(42) 11.04.2003
(71) «Մշակ» ՓԲԸ(AM)
(72) Լենոն Պողոսյան(AM), Վլադիմիր Պողոսյան(AM), Միխայիլ Մոսեսով(AM), Արամայիս Սուսանյան(AM)
(73) «Մշակ» ՓԲԸ(AM)
(74) Ա. Պետրոսյան
(54) Խեցե թաղանթների ծակատման սարք
(57) Գյուտը վերաբերում է ծակատման սարքերին եւ կարող է կիրառվել էլեկտրոնային սարքերի բազմաշերտապատախտակների արտադրության մեջ:

Սարքն ունի իրանի վրա տեղակայված մամլամայրերի, մամլամատների եւ հենակային զուլակներ, որոնք միասին ամրակցված են եւ կազմում են եռաշերտ ծակատիչ փոխարինելի գլխիկ, իսկ ծակատման մեխանիզմների զուլակը

կողմնորոշված է հորիզոնական առանցքի ուղղությամբ, այդ առանցքի շուրջը դարձի հնարավորությամբ:

Բարձրացվում է սարքի արտադրողականությունը եւ աշխատանքի հուսալիությունը, 3նկ.:

- (51) 7 B28D 5/00 (11) 1417 (13) A2
(21) P20030067 (22) 26.05.2003
(42) 11.08.2003
(71) Ալեքսան Արզումանյան (AM), Աղասի Պողոսյան (AM)
(72) Ալեքսան Արզումանյան (AM), Աղասի Պողոսյան (AM)
(73) Ալեքսան Արզումանյան, Գյումրի, Զ. Ղանդիկյան 47, բն. 5 (AM), Աղասի Պողոսյան, Գյումրի, Արեւելյան 1, բն. 34 (AM)
(54) Պրիզմայաձեւ ալմաստներից ադամանդի կիսապատրաստուկների ստացման եղանակ
(57) Գյուտը վերաբերում է ալմաստի մշակմանը, մասնավորապես՝ պրիզմայաձեւ ալմաստներից ադամանդի կիսապատրաստվածքների ստացման եղանակներին:
Պրիզմայի ճակատային մակերեսային վրա չափանշում են երկրաչափական պատկեր եւ այդ պատկերի ուրվագծի գոտուց իրականացնում սղոցում ալմաստի հիմքի նկատմամբ անկյան տակ: Մի չափանշում են ներգծյալ շրջանագիծ եւ դրան շոշափող պրիզմայի միստերին զուգահեռ գծեր եւ այդ գծերով սղոցում 90 աստիճան անկյան տակ, մյուս դեպքում՝ չափանշում են պրիզմայի միստերի միջնակետերը միացնող եռանկյուն եւ եռանկյունու կողմերով սղոցում ալմաստի հիմքի նկատմամբ 45 աստիճան անկյան տակ: Ստացվում են տարբեր չափերի ադամանդի կիսապատրաստվածքներ, 3 նկ.:

- (51) 7 B28D 5/04 (11) 1418 (13) A2
(21) P20030060 (22) 05.05.2003
(42) 11.07.2003
(71) Ջոն Ասատրյան (AM)
(72) Ջոն Ասատրյան (AM)
(73) Ջոն Ասատրյան, Գյումրի, Մ. Խորենացու 24, բն. 4 (AM)
(54) Քարի ճեղքման սարք
(57) Գյուտը վերաբերում է կիսաթանկարժեք եւ թանկարժեք քարերի նրբամշակմանը, մասնավորապես՝ քարերի ճեղքման սարքերին:
Սարքն ունի գլանաձեւ իրան, որի մեջ տեղակայված են զարկանը եւ ճեղքման հարթությունում ինքնադասավորվող ճեղքող սեպերը: Իրանի ստորին մասին ամրակցված է գլանաձեւ

հենարան, որի խոռոչում, իրանի առանցքի շուրջը շրջման հնարավորությամբ, տեղակայված է քարի տակդիր: Սեպերի վերին ճակատները լայնացված են, իսկ դրանց եւ զարկանի միջեւ կա բացակ, որը լցված է գնդիկավոր կոտորակով:

Բարձրանում է ճեղքման ճշգրտությունը, նկ.3:

- (51) 7 B60G 21/00 (11) 1419 (13) A2
(21) P20030063 (22) 15.04.2003
(42) 11.08.2003
(71) Կարո Մոսիկյան (AM), Վանիկ Ավալյան (AM)
(72) Կարո Մոսիկյան (AM), Վանիկ Ավալյան (AM)
(73) Կարո Մոսիկյան, Երեւան, Րաֆֆու 93, բն. 60 (AM), Վանիկ Ավալյան, Աբովյան, 3-րդ միկրոշրջան 26, բն. 12 (AM)
(54) Ավտոմոբիլի կայունարար
(57) Գյուտը վերաբերում է ավտոմոբիլաշինությանը, մասնավորապես ավտոմոբիլի թափքի դիրքը կարգավորող կայունարարներին:
Ավտոմոբիլի կայունարարն ունի II-աձեւ ճարմանդ, որի ուղղաձիգ ձգածողերը հողա-կապերով միակցված են ավտոմոբիլի կախոցի համապատասխան լծակին, ուղղաձիգ մխոցակոթերով երկու հիդրոգլաններ, երկու ռեակտիվ գլաններ, որոնցից յուրաքանչյուրի խոռոչը խողովակով միակցված է հակադիր հիդրոգլանի խոռոչին, ընդ որում յուրաքանչյուր խոռոչում տեղադրված է ռոտոր: Պարզեցվում է կայունարարի կառուցվածքը, 1 նկ.:

- (51) 7 B60K 5/04 (11) 1420 (13) A2
(21) P20020170 (22) 11.10.2002
(42) 11.06.2003
(71) Ռազմիկ Մովսեսյան (AM)
(72) Ռազմիկ Մովսեսյան (AM), Աշոտ Մովսեսյան (AM), Հովհաննես Մովսեսյան (AM), Անահիտ Մովսիսյան (AM)
(73) Ռազմիկ Մովսեսյան, Երեւան, Անդրանիկի 56, բն. 7 (AM)
(54) Տրանսպորտային միջոց
(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը, մասնավորապես՝ տրանսպորտային միջոցներին:

Տրանսպորտային միջոցն ունի թափքի հիմք, դրան ամրակցված շարժիչ, որը տեղակայված է թափքի հիմքի վրա այնպես, որ շարժիչի ծնկաձեւ լիսեռի պտտման առանցքը ուղղահայաց է տրանսպորտային միջոցի երկայնական առանցքին: Շարժիչի ծնկաձեւ լիսեռը փոխանցումների տուփի առաջնային լիսեռի հետ

կապված է միջանկյալ հանգույցի միջոցով, որը իրականացված է կամ կոնաձեւ ատամնանիվների զույգի միացության միջոցով, կամ լրացուցիչ լիսեռի միջոցով, որի ուղղատամ եւ կոնաձեւ ատամնանիվները միացության մեջ են ծնկաձեւ լիսեռի ու փոխանցումների տուփի առաջնային լիսեռի համապատասխան ատամնանիվների հետ:

Սեծացվում են տրանսպորտային միջոցի հզորությունը եւ արագությունը, 4 նկ.:

- (51) 7 B60Q 9/00 (11) 1421 (13) A2
B62D 41/00
(21) P20030055 (22) 21.04.2003
(42) 11.07.2003
(71) Բաղդիկ Կիրակոսյան (AM)
(72) Բաղդիկ Կիրակոսյան (AM)
(73) Բաղդիկ Կիրակոսյան, Երեւան, Տիչինայի 116 (AM)
(54) Ճանապարհին վթարային իրավիճակի մասին ազդարարման սարք
(57) Գյուտը վերաբերում է ճանապարհների վթարային իրավիճակի մասին ազդարարման եւ նախազգուշացման համակարգերին:
Ճանապարհին վթարային իրավիճակի մասին ազդարարման սարքը պարունակում է բախմանը արձագանքման հանգույց՝ փոխկապակցված գործարկման մեխանիզմի հետ, որն ունի ազդանշանային տարր: Բախմանը արձագանքման հանգույցը կատարված է կոնտակտորի տեսքով, միացված մի ծայրով հոսանքի աղբյուրի մի բեւեռին, իսկ մյուսով՝ ազդանշանային տարրին, որի ելքը միացված է հաստատուն հոսանքի աղբյուրի մյուս բեւեռին: Ազդանշանային տարրը կատարված է լուսային եւ/կամ ձայնային եւ/կամ ռադիոհաղորդիչի տեսքով:
Բարձրանում է տրանսպորտային միջոցների ուղեւորների եւ վարորդների անվտանգությունը, 1 նկ.:

- (51) 7 B64D 17/80 (11) 1422 (13) A2
(21) P20030064 (22) 19.05.2003
(42) 11.08.2003
(71) Անուշավան Թովմասյան (AM)
(72) Անուշավան Թովմասյան (AM), Կարեն Թովմասյան (AM)
(73) Անուշավան Թովմասյան, Երեւան, Վիլյուսի 101, բն. 7 (AM)
(54) Վթարային անկարգելային համակարգ ինքնաթիռների համար
(57) Գյուտը վերաբերում է ինքնաթիռների անվտանգության միջոցներին:

Վթարային անկարգելային համակարգը կազմված է գմբթի պաստառից եւ ճոպաններից, որոնք փաթաթված են ինքնաթիռի իրանում գտնվող եւ իրենց առանցքի շուրջը ազատ պտտվող հոլովակների վրա: Անկարգելի գմբթի պաստառը ճոպանների միջոցով ձգված է ինքնաթիռի ֆյուզելաժի վերին, արտաքին մակերեսային երկայնքով եւ իրականացված է միմիանց միակցված երեք երկայնական հատվածամասերի տեսքով, որոնցից եզրայինները կատարված են երկշերտ: Եզրային հատվածամասերի արտաքին շերտերը իրենց երկար կողմերից մեկով միացված են կենտրոնական հատվածամասի եւ ներքին շերտի համապատասխան եզրերի հետ, իսկ ազատ անկյուններով շարժուն միակցված են զսպանակի հետ, որը կապում է ներքին շերտի համապատասխան անկյունները ֆյուզելաժի լայնական ուղղությամբ: Բարձրանում է ինքնաթիռների վայրէջքի անվտանգության աստիճանը շարժիչների անսարքության դեպքում, 4 նկ.:

- (51) 7 B64D 25/10 (11) 1423 (13) A2
B64D 25/12
(21) P20030056 (22) 23.04.2003
(42) 11.07.2003
(71) Ժիրայր Սեւոյան (AM)
(72) Ժիրայր Սեւոյան (AM)
(73) Ժիրայր Սեւոյան, Երեւան, Եղբայրության 19, բն. 44 (AM)
(54) Օդային աղետների ժամանակ ուղեւորների անհատական անվտանգությունն ապահովող սարք
(57) Գյուտը վերաբերում է ավիացիոն տեխնիկայի բնագավառին, մասնավորապես՝ ուղեւորների անվտանգությունը ապահովող սարքերին:
Սարքն ունի թիկնակով նստոց, գետնի հետ բախման էներգիայի մարման մեխանիզմ, ռետինե փչովի օձիք, ինչպես նաեւ ջերմամեկուսիչ շերտով պատված ներքին մակերեսային թիկնակով նստոցի առջնի ոտքերին, կափարիչով նստոցը փակելու էլեկտրամեխանիկական հանգույց, կափարիչը նստոցի վրա սեւեռող հանգույց: Սարքն ունի նաեւ ծալովի պտուտակաթելեր, որոնք համատեղված են թիկնակով նստոցի կողային հարթության հետ, եւ վթարային բացման մեխանիզմով անկարգել, ընդ որում թիկնակով նստոցը վերին մասում ունի խցիկ, որում տեղադրված է անկարգելը:
Սարքից օգտվելու համար չի պահանջվում հատուկ փորձի եւ մարզվածության անհրաժեշտություն, 2 նկ.:

- (51) 7 C02F 1/42 (11) 1424 (13) A2
B01J 20/26
(21) P20020199 (22) 29.11.2002
(42) 17.02.2003
(71) Գրիգորի Այվազյան (AM)
(72) Գրիգորի Այվազյան (AM), Զարուհի Զուռնյան (AM)
(73) Գրիգորի Այվազյան, Երեւան, Դ.Անհաղթի 18, բն.32(AM)
(54) Կապարի իոններից հոսքաջրերի մաքրման եղանակ
(57) Գյուտը վերաբերում է հոսքաջրերի՝ մասնավորապես կապարի իոններից մաքրման եղանակներին:

Մաքրումը կատարում են իոնափոխանակման մեթոդով:

Կապարի իոններ պարունակող հոսքաջրերի մեջ ներմուծում են 50-90 զանգվ. % փայտե թեփով լցավորված սուլֆասալիցիլաթթվի եւ ֆորմալդեհիդի պոլիկոնդենատ, պահում 30 րոպեի ընթացքում, որից հետո հոսքաջուրը քանում են:

Բարձրանում է մաքրման աստիճանը:

- (51) 7 C02F 1/62 (11) 1425 (13) A2
C02F 1/42
(21) P20020200 (22) 29.11.2002
(42) 17.02.2003
(71) Գրիգորի Այվազյան (AM)
(72) Գրիգորի Այվազյան (AM), Զարուհի Զուռնյան (AM), Կարապետ Թահմազյան (AM)
(73) Գրիգորի Այվազյան, Երեւան, Դ.Անհաղթի 18, բն. 32 (AM)
(54) Կապարի իոններից հոսքաջրերի մաքրման եղանակ
(57) Գյուտը վերաբերում է հոսքաջրերի՝ մասնավորապես կապարի իոններից մաքրման եղանակներին: Մաքրումը կատարում են կլանման մեթոդով:

Կապարի իոններ պարունակող հոսքաջրերի մեջ՝ pH-ի 2-13 արժեքներում ներմուծում են ակտիվացրած ածուխ եւ պղնձի տաշեղներ՝ պղնձ:ածուխ=1:2 զանգվ.հարաբերակցությամբ, որից հետո հոսքաջուրը խառնում են 10-60 րոպեի ընթացքում եւ քանում:

Բարձրանում է մաքրման աստիճանը եւ կրճատվում պրոցեսի տեւողությունը:

- (73) Գրիգորի Այվազյան, Երեւան, Դ.Անհաղթի 18, բն. 32 (AM)

- (54) Կապարի իոններից հոսքաջրերի մաքրման եղանակ

- (57) Գյուտը վերաբերում է հոսքաջրերի՝ մասնավորապես կապարի իոններից մաքրման եղանակներին:

Կապարի իոններ պարունակող հոսքաջրերի մեջ՝ pH-ի 12,5-13,5 արժեքներում ներմուծում են ալյումինի եւ պղնձի տաշեղներ՝ ալյումին : պղնձ = 1:2 զանգվ.հարաբերակցությամբ, որից հետո հոսքաջուրը խառնում են 10 րոպեի ընթացքում եւ քանում:

Բարձրանում է մաքրման աստիճանը եւ կրճատվում պրոցեսի տեւողությունը:

- (51) 7 C02F 3/28 (11) 1427 (13) A2
(21) P20030047 (22) 09.04.2003
(42) 11.06.2003
(71) Էրնեստ Ղազարյան (AM), Օլեգ Սուդզիլովսկի (AM), Ալի Նադեր (SY)
(72) Էրնեստ Ղազարյան (AM), Օլեգ Սուդզիլովսկի (AM), Ալի Նադեր (SY)
(73) Էրնեստ Ղազարյան, Երեւան, Տպագրիչների 5/19 (AM), Օլեգ Սուդզիլովսկի, Երեւան, Նայբանդյան 50, բն. 32 (AM), Ալի Նադեր, Երեւան, Սոլդովական 93/55 (SY)
(54) Օրգանական թափոնների խմորման սարք
(57) Գյուտը վերաբերում է օրգանական, մասնավորապես՝ գյուղատնտեսական եւ կենցաղային, թափոնների խմորման սարքերին:

Սարքն ունի թափոնների լցման, դատարկման եւ գազի արտահանման խողովակաուստերով խմորման բաք, որի մեջ համակենտրոնորեն տեղադրված են գլանաձեւ թաղանթային էլեկտրոդներ: Կենտ եւ զույգ էլեկտրոդները միացված են սնող աղբյուրի բեւեռականությունը փոխանջատող ծրագրավորող սարքի ելքին: Բաքն արտաքին կողմից ընդգրկված է արեւային կոլեկտորին միացված պտուտակաձեւ ջերմակրիչ խողովակով:

Սնող աղբյուրից էլեկտրական դաշտի շնորհիվ տեղի է ունենում էլեկտրական օսմոսի երեւոյթ եւ թափոնի մասնիկների համապատասխան տեղաշարժում սկզբում՝ մեկ, ապա հակառակ ուղղությամբ՝ ապահովելով թափոնների խառնում, 1 նկ.:

- (51) 7 C02F 1/62 (11) 1426 (13) A2
(21) P20020198 (22) 29.11.2002
(42) 17.02.2003
(71) Գրիգորի Այվազյան (AM)
(72) Գրիգորի Այվազյան (AM), Զարուհի Զուռնյան (AM), Կարապետ Թահմազյան (AM)

- (51) 7 C07F 5/06 (11) 1428 (13) A2
C14C 3/08
(21) P20030068 (22) 04.06.2003
(42) 11.08.2003
(71) Սոկրատ Մարգարյան (AM)

- (72) Սոկրատ Մարգարյան (AM), Մանուկ Մարգարյան (AM)
 (73) Սոկրատ Մարգարյան, Երեւան, Գոգոլի 85, բն.32(AM)
 (54) Ալյունինի սուլֆատի ալիֆատիկ ամինների հետ ձեւափոխված կոմպլեքսի ստացման եղանակ
 (57) Գյուտը վերաբերում է ալյունինի սուլֆատի ալիֆատիկ ամինների հետ ձեւափոխված կոմպլեքսների ստացման եղանակներին, որոնք կարող են կիրառվել կաշվի արտադրության մեջ որպես դաբաղիչներ:

Կոմպլեքսը ստանում են հետեւյալ կերպ՝ փոշի վիճակում ալյունինի սուլֆատին ավելացնում են երկեթանոլամին կամ եռեթանոլամին կամ էթիլենտերկամին, ապա խառնում ելանյութերը 60-70°C ջերմաստիճանում մինչեւ համասեռ զանգվածի ստանալը, չորացնում այն, որից հետո փոշիացնում տրորմամբ: Պարզեցվում է եղանակը, իսկ ստացված կոմպլեքսներով կաշիների դաբաղումը բարելավում է դրանց ֆիզիկամեխանիկական ցուցանիշները:

- (51) 7 C07F 5/06 (11) 1429 (13) A2
 C14C 3/08
 (21) P20030069 (22) 04.06.2003
 (42) 11.08.2003
 (71) Սոկրատ Մարգարյան (AM)
 (72) Սոկրատ Մարգարյան (AM), Արշալույս Շահինյան (AM), Մխիթար Շահինյան (AM)
 (73) Սոկրատ Մարգարյան, Երեւան, Գոգոլի 85, բն. 32 (AM)
 (54) Ոչխարի մորթե թավշակաշվի ստացման եղանակ
 (57) Գյուտը վերաբերում է մորթիների մշակման եղանակներին, մասնավորապես՝ ոչխարի մորթե թավշակաշվի (վելյուր) ստացման եղանակներին:

Մրջնաթթվով եւ կերակրի աղով պիկելված ոչխարի մորթին ենթարկում են դաբաղման ալյունինի սուլֆատի ալիֆատիկ ամինների՝ էթիլենտերկամինի կամ երկեթանոլամինի կամ եռեթանոլամինի հետ կոմպլեքսով եւ քրոմի սուլֆատի հիմնային աղով: Ընդ որում, ալյունինի սուլֆատի ալիֆատիկ ամինների հետ կոմպլեքսը եւ քրոմի սուլֆատի հիմնային աղը վերցնում են ալյունինի եւ քրոմի օքսիդների հաշվարկով (0,5-1,0) :1 հարաբերակցությամբ:

Նվազում է մրջնաթթվի ծախսը եւ բարձրանում մորթե թավշակաշվի որակը՝ ամրության սահմանը, հարաբերական երկարացումը եւ լցունությունը:

- (51) 7 C08C 1/075 (11) 1430 (13) A2
 C08C 1/08
 (21) P20020154 (22) 10.09.2002
 (42) 11.07.2003
 (31) 10145097.4 (32) 13.09.2001 (33) DE
 (71) Բայեր Ակտիենգեզելշաֆտ(DE)
 (72) Քրիստիանե Օպենհեյմեր-Շտիքս(DE), Սիլստել Թրավինգ(DE)
 (73) Բայեր Ակտիենգեզելշաֆտ(DE)
 (74) Ա. Պետրոսյան
 (54) Պոլիմերային լատեքսների խտացման եղանակ
 (57) Գյուտը վերաբերում է պոլիմերային լատեքսների մշակմանը, մասնավորապես՝ խտացման եղանակով:

Լատեքսների դիսպերսիան խառնում են պարզեցմանը նպաստող նյութի հետ, որից հետո խառնուրդը բաժանում են լատեքսի եւ վերնստվածքային հեղուկի՝ սերտակցմանը նպաստող թելքագոյացմանն ունակ նյութի առկայությամբ, ապա հեռացնում խտացրած լատեքսը: Եղանակը կատարում են անընդհատ ռեժիմով, խառնման փուլ նյութերը մատուցում են ուղղահոս կամ հակահոս կասկադային ձեւով, ընդ որում նախքան հեռացման փուլը եղանակը ներառում է լրացուցիչ խառնման եւ բաժանման փուլեր: Պարզեցմանը նպաստող նյութը նատրիումի ալգինատ է կամ թաղանթանյութի ածանցյալ, սերտակցմանը նպաստող նյութը հյուսվածքեղենով կամ գործած պատրաստվածքներով կամ մանրաթելքով մոմածե զտիչ է, որը պատրաստում են չժանգոտվող պողպատի եւ շտապելային ապակեթելքի համակցությունից, չժանգոտվող պողպատի եւ պոլիարոպիլենի համակցությունից կամ չժանգոտվող պողպատի եւ բազմաէսթերի համակցությունից:

Բարձրանում է եղանակի արդյունավետությունը:

- (51) 7 C08F 112/08 (11) 1431 (13) A2
 C08F 118/06
 (21) P20030057 (22) 23.04.2003
 (42) 11.07.2003
 (71) Դերենիկ Քարամյան (AM), Էդվարդ Հակոբյան (AM), Պատվական Ոսկանյան (AM)
 (72) Դերենիկ Քարամյան (AM), Էդվարդ Հակոբյան (AM)
 (73) Դերենիկ Քարամյան (AM), Էդվարդ Հակոբյան (AM), Պատվական Ոսկանյան (AM)
 (74) Ն. Թումանյան
 (54) Պոլիվինիլացետատի ստացման եղանակ
 (57) Գյուտը վերաբերում է պոլիմերային քիմիայի բնագավառին եւ կարող է կիրառվել պոլիվինիլացետատի ածանցյալների ստացման համար:

Վիճակագրատուր պոլիմերացնում են ջրային միջավայրում էմուլսարարի՝ մակերեւութաակտիվ նյութի, եւ ակտիվացնող համակարգի՝ մանգանի եռացետիլացետոնատի ու թթվի առկայությամբ: Ընդ որում պրոցեսը կատարում են օդի միջավայրում, ածխաջրածնային եւ ջրային ֆազերի 1:(1,5-2,0) զանգվ. հարաբերակցությամբ, որպես թթու վերցնում են կարբոնային կամ հանքային թթու, որպես էմուլսարար վերցնում են իոնածին, ոչ իոնածին, պոլիմերային մակերեւութաակտիվ նյութ կամ դրանց խառնուրդը: Մանգանի եռացետիլացետոնատը ներմուծում են համակարգի մեջ $(8-15) \times 10^{-3}$ մոլ/լ վիճակագրատուի քանակով, իսկ թթուն՝ $(3-150) \times 10^{-3}$ մոլ/լ ջրի քանակով:

Պարզեցվում է եղանակը, ընդլայնվում են դրա տեխնիկական հնարավորությունները՝ ստացվում են տարբեր հատկություններով պոլիվիճակագրատուի դիսպերսիաներ:

- | | | |
|---|-----------------|---------|
| (51) 7 C30B 23/02 | (11) 1432 | (13) A2 |
| C23C 14/00 | | |
| (21) P20030054 | (22) 21.04.2003 | |
| (42) 11.07.2003 | | |
| (71) ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ (AM) | | |
| (72) Արմեն Կուզմանյան (AM) | | |
| (73) ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ, ք. Աշտարակ-2 (AM) | | |
| (54) Նուրբ թաղանթների ստացման եղանակ | | |
| (57) Գյուտը վերաբերում է նուրբ թաղանթների ստացման բնագավառին, մասնավորապես՝ ժապավենի տեսքով տակդիրի վրա լազերային փոշեպատմամբ թաղանթների ստացման եղանակներին: | | |

Թաղանթների ստացման եղանակում ճեղք ունեցող դիմակի առկայությամբ շարժվող տակդիրի վրա կատարում են մատցվող նյութի լազերային փոշեպատում՝ նախապես որոշելով դիմակի ճեղքի անհրաժեշտ ձևը եւ չափերը: Տակդիրը համընթաց շարժվող ժապավեն է, իսկ դիմակի ճեղքի եզրերի ուրվագիծը որոշում են $DxV=const$ բանաձևից, որտեղ՝ D-ն ճեղքի լայնությունն է ժապավենի երկայնական առանցքի ուղղությամբ, V-ն՝ անշարժ տակդիրի վրա փոշեպատված թաղանթի D հատվածի փոշեպատման միջին արագությունն է, ՅՆկ:

- | | | |
|----------------------------------|-----------------|---------|
| (51) 7 E04B 1/348 | (11) 1433 | (13) A2 |
| (21) P20030016 | (22) 24.07.2001 | |
| (31) 00/09704 | (32) 25.07.2000 | (33) FR |
| (42) 13.05.2003 | | |
| (85) 20.02.2003 | | |
| (86) PCT/FR 01/02405, 24.07.2001 | | |

(87) W0 02/08532 A1, 31.01.2002

(71) Օբլե, Բերտրան, Լուի, Ֆելիքս (FR)

(72) Օբլե, Բերտրան, Լուի, Ֆելիքս (FR)

(73) Օբլե, Բերտրան, Լուի, Ֆելիքս (FR)

(74) Է. Նահապետյան

(54) Շինությունների կառուցման եղանակ հավաքովի տարրերի միջոցով

(57) Գյուտը վերաբերում է շինարարությանը, մասնավորապես՝ հավաքովի տարրերի միջոցով շինությունների կառուցման եղանակներին:

Եղանակն իրականացնում են գործարանային պայմաններում պատրաստված շինարարական տարրերի մոնտաժման միջոցով: Եղանակը կայանում է նրանում, որ օգտագործում են երեք տեսակի տարրեր՝ երկու ճակատամաս եւ մեկ հատակ պարունակող պատային տարր, մեկ ծածկամաս, մեկ ճակտոնապատի մաս եւ մեկ եզրամաս պարունակող տանիքային տարր, եւ տեխնոլոգիական սարքավորանքի, օրինակ՝ ջրագազատարների, ինչպես նաեւ սանհանգույցի եւ խոհանոցի սարքավորանքի տեղակայման համար նախատեսված տեխնիկական տարր: Յուրաքանչյուր տարր իրականացված է հավաքովի շրջանակի միջոցով, ընդ որում յուրաքանչյուր տարրի կենտրոնական բացվածքում տեղակայված է պանել կամ ապակեպատ բլոկ:

Ապահովվում է բազմահարկ շենքերի հարդարման աշխատանքների կատարումը եւ տեխնոլոգիական սարքերի տեղադրումը, ՅՆկ.:

- | | | |
|--|-----------------|---------|
| (51) 7 E21D 13/02 | (11) 1434 | (13) A2 |
| (21) P20030045 | (22) 31.03.2003 | |
| (42) 11.06.2003 | | |
| (71) Մելս Միքայելյան (AM), Վահան Միքայելյան (AM) | | |
| (72) Մելս Միքայելյան (AM), Վահան Միքայելյան (AM) | | |
| (73) Մելս Միքայելյան, Երեւան, Լենինգրադյան 16, բն. 30 (AM), Վահան Միքայելյան, Երեւան, Նոր Արեշի 15 -րդ փող. 39 (AM) | | |
| (54) Ստորգետնյա կառույցի միաձույլ բետոնամբ կառուցման եղանակ եւ դրա իրականացման համակարգվածք | | |
| (57) Գյուտը վերաբերում է լեռնային արդյունաբերությանը, մասնավորապես՝ ստորգետնյա կառույցների միաձույլ բետոնամբ կառուցման եղանակներին եւ դրանց իրականացման համակարգվածքներին: | | |

Եղանակը կայանում է նրանում որ հորատանցում են եզրային օժանդակ փորվածքներ եւ վերին օժանդակ փորվածք, կառույցի կամարի եզրագծով դրանք միացնում են իրար եւ ստանում կամարածե բացվածք, տեղադրում են ժամանակավոր ամրակապը

եւ բետոնում են: Ժամանակավոր ամրակապի տեղադրումը եւ բետոնումն իրականացնում են մեկ համակառուցվածքով, որը տեղադրում են հորատանցման ժամանակ, ընդ որում բետոնի շաղախը բետոնապատման կաղապար են մղում վերին օժանդակ փորվածքից՝ վերելից-ներքեւ ուղղությամբ:

Համակառուցվածքն ունի իրար միացված կամարակալների համակարգ եւ փորվածքի մակերեսային սեղմման միջոց ունեցող մետաղյա ցանցով ժամանակավոր ամրակապ: Կամարակալները սեւեռված են երկայնական զոտիների օգնությամբ, իսկ մետաղյա ցանցով ժամանակավոր ամրակապը տեղադրված է կամարակալների համակարգի վրա, ընդ որում փորվածքի բաց մակերեսային սեղմման միջոցն ունի նեցուկներ եւ սեղմող փայտաքանոններ:

Բարձրանում է եղանակի արդյունավետությունը, 2 անկախ կետ, 8նկ.:

- (51) 7 F01K 21/02 (11) 1435 (13) A2
(21) P20030079 (22) 19.06.2003
(42) 11.09.2003
(71) Գագարին Հարությունյան (AM), Սերգեյ Եղիազարյան (AM)
(72) Գագարին Հարությունյան (AM), Սերգեյ Եղիազարյան (AM)
(73) Գագարին Հարությունյան, Կոտայքի մարզ, Հրազդան, Միկրոշրջան 87, բն. 6 (AM), Սերգեյ Եղիազարյան, Կոտայքի մարզ, Հրազդան, Միկրոշրջան 87, բն. 6 (AM)
(54) Շոգեուժային կայանք
(57) Գյուտը վերաբերում է շոգեուժային կայանքներին եւ կարող է կիրառվել ջերմաէներգետիկայի օբյեկտներում: Շոգեուժային կայանքն ունի գերտաքացած աշխատանքային մարմնի ստացման առաջին սարքաշղթա, որը կազմված է ջեռուցիչից, շրջանառու պոմպից, ջերմամեկուսացված անոթից՝ իր կոմուտացման փականներով, ջերմային շարժիչից, ջերմային շարժիչի հետ հողավորված զենեռատորից եւ ջերմափոխանակիչ-վերաօգտագործիչից: Կայանքը լրացուցիչ ունի առաջին սարքաշղթային հարակից երկրորդ սարքաշղթան, որի տարրերի կազմը համանման է առաջին սարքաշղթայի տարրերի կազմին, ընդ որում երկրորդ սարքաշղթայում որպես ջեռուցիչ ծառայում է առաջին սարքաշղթայի ջերմափոխանակիչ-վերաօգտագործիչը: Որպես առաջին սարքաշղթայի աշխատանքային մարմին օգտագործված է ջուրը, իսկ որպես երկրորդ սարքաշղթայի աշխատանքային մարմին՝ հեղուկ ածխաթթու: Սարքաշղթաներից յուրաքանչյուրում ջերմամեկուսացված անոթը կատարված է զույգված՝ զուգահեռ միացված երկու ջերմամեկուսացված անոթներից, իրենց

կոմուտացման փականներով, իսկ ջերմային շարժիչը կատարված է զուգահեռ միացված ջերմային շարժիչների շարքի տեսքով, որոնցից յուրաքանչյուրն ունի իր կոմուտացման պոմպը:

Բարձրացվում է կայանքի ՕԳԳ-ն եւ լայնացվում են նրա ֆունկցիոնալ հնարավորությունները, 1 նկ.:

- (51) 7 F41A 3/50 (11) 1436 (13) A2
(21) P20030058 (22) 25.04.2003
(42) 11.07.2003
(71) Վահան Մանասյան (AM)
(72) Վահան Մանասյան (AM)
(73) Վահան Մանասյան, Երեւան, Մ.Սարյան 40, բն. 52 (AM)
(54) Ինքնաձիգի կիսաազատ փակաղակ
(57) Գյուտը վերաբերում է ինքնաձիգի մաս կազմող կիսաազատ փակաղակներին եւ կարող է կիրառվել այն դեպքերում, երբ ինքնաձիգի փողը անշարժ ամրակցված է իրանին:
Ինքնաձիգի կիսաազատ փակաղակը ունի երկու՝ առջեւի եւ հետին մասեր, լծակային արագացուցիչ եւ մարտական բնիկ: Արագացուցիչը ազատ տեղավորված է փակաղակի մարտական բնիկի թիկունքում գտնվող եւ փակաղակի առջեւի ու հետին մասերի հանդիպակաց ճակատներով կազմված շառավղային խոռոչում եւ ունի ինքնաձիգի իրանից կառչելու կոր ժանիք:
Պարզեցվում է փակաղակի կառուցվածքը, 2 նկ.:

- (51) 7 G01B 11/06 (11) 1437 (13) A2
(21) P20030039 (22) 24.03.2003
(42) 11.06.2003
(71) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (AM)
(72) Ներսես Դավթյան (AM), Գարրի Բերբերյան (AM), Սուրեն Հովսեփյան (AM), Ռուբեն Հակոբյան (AM)
(73) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Երեւան, Տերյան 105 (AM)
(54) Հիդրոզենեռատորների կրնկակալներում յուղի թաղանթի հաստության հսկման եղանակ
(57) Գյուտը վերաբերում է չափողական տեխնիկայի բնագավառին եւ կարող է կիրառվել հզոր հիդրոզենեռատորներում յուղային թաղանթի հաստությունը շահագործման ընթացքում վերահսկելու համար:
Հիդրոզենեռատորի կրնկակալներում յուղի թաղանթի հաստության հսկման եղանակում լիսեռնի միացված պտտվող աշխատանքային

սկավառակի եւ կրնակակւնների սեգմենտների միջեւ գտնվող յուղային թաղանթի մակերեսույթը ճառագայթահարում են անդրաձայնային ուղղանկյունաձեւ իմպուլսներով, ընդունում եւ գրանցում են անդրադարձված իմպուլսները, մշակում ստացված տվյալները եւ հաշվարկում թաղանթի հաստությունը հետեւյալ բանաձեւով՝

$$\Delta = k(T_1 - T_2),$$

որտեղ՝ T_1 -ը դիֆրակցիոն իմպուլսների ընթացքի պարբերությունն է, T_2 -ը՝ միմյանց հաջորդող դիֆրակցիոն երկու իմպուլսների միջեւ ընկած ժամանակային միջակայքը,

k -ն՝ փորձնական եղանակով որոշված համեմատականության գործակիցը:

Ապահովվում է յուղային թաղանթի հաստության անընդհատ վերահսկում, 2 նկ:

- (51) 7 G01F 1/00 (11) 1438 (13) A2
G01F 1/24
(21) P20030018 (22) 24.02.2003
(42) 11.06.2003
(71) Ջրային հիմնահարցերի եւ հիդրոտեխնիկայի ինստիտուտ ՓԲԸ(AM), Երեւանի «Ջրնուկլյուդի» ՓԲԸ-ի «Մաշտոց» մասնաճյուղ (AM)
(72) Սուրեն Մարտիրոսյան(AM), Գագիկ Մարտիրոսյան (AM), Մարտին Հովսեփյան (AM), Կարեն Գրիգորյան (AM), Աշոտ Թաթարյան (AM), Հակոբ Սիմոնյան(AM), Սերժիկ Մկրտչյան (AM)
(73) Ջրային հիմնահարցերի եւ հիդրոտեխնիկայի ինստիտուտ ՓԲԸ, Երեւան, Արմենաքյան 125(AM)
(54) Հեղուկի ծախսի վերահսկման համակարգ
(57) Գյուտը վերաբերում է հեղուկի ծախսի գրանցմանը եւ կարող է օգտագործվել կենցաղային պայմաններում, մասնավորապես՝ բնակելի տարածքներում ջրի ծախսի չափման համար:

Հեղուկի ծախսի վերահսկման համակարգն ունի կատարող եւ հեռակառավարման բլոկներ, որոնք ներառում են ջրաչափիչ սարք, վթարային անջատման փական, էլեկտրոնային թվատախտակ եւ սնման աղբյուր: Կատարող բլոկն ունի շուռտվիկ մեխանիզմով օժտված էլեկտրական կերպափոխիչ, որը միացված է հեռակառավարման բլոկի բաշխիչ հարմարանքին: Հեռակառավարման բլոկը ներառում է ահագանգման եւ ինֆորմացիայի մշակման ու կուտակման հարմարանքներ:

Պարզեցվում է համակարգի կառուցվածքը, ապահովվում համատեղելիությունը տարբեր ջրաչափիչ սարքերի հետ, նվազեցվում է էներգիայի ծախսը, 1 նկ:

- (51) 7 G01F 23/14 (11) 1439 (13) A2
(21) P20030023 (22) 03.03.2003
(42) 13.05.2003
(71) Բորիս Մամիկոնյան(AM), Արշակ Շաղգամյան (AM), Խորեն Մամիկոնյան(AM)
(72) Բորիս Մամիկոնյան(AM), Արշակ Շաղգամյան (AM), Խորեն Մամիկոնյան(AM)
(73) Բորիս Մամիկոնյան, Գյումրի, Ն.Շնորհալու 25, բն.24(AM), Արշակ Շաղգամյան, Երեւան, Կուզնեցովի 10, բն. 4(AM), Խորեն Մամիկոնյան, Գյումրի, Ն.Շնորհալու 25, բն.24(AM)
(54) Խյուսի խտության եւ մակարդակի չափիչ
(57) Գյուտը վերաբերում է էլեկտրաչափողական տեխնիկային եւ նախատեսված է ֆլուտացման եղանակով հանքանյութերի հարստացման տեխնոլոգիական գործընթացում խյուսի խտության եւ մակարդակի անընդհատ չափման համար:

Չափիչն ունի դիֆերենցիալ եւ հավելուրդային ճնշակերպափոխիչներ, լարման երկու բաժանարար, որոնցից առաջինն ունի երկու, իսկ երկրորդը՝ մեկ ելքային սեղմակ, երկտակտ ինտեգրումով անալոգաթվամշանային երկու կերպափոխիչ՝ յուրաքանչյուրն իր չափման եւ հեռանկիչային լարման մուտքային սեղմակներով, եւ դրանց ելքերում միացված թվամշանային ցուցասարքեր:

Ըստ գյուտի առաջին անալոգաթվամշանային կերպափոխիչի չափման մուտքային սեղմակը միացված է լարման առաջին բաժանարարի առաջին ելքային սեղմակին, լարման առաջին բաժանարարի երկրորդ ելքային սեղմակը միացված է երկրորդ անալոգաթվամշանային կերպափոխիչի հեռանկիչային լարման մուտքային սեղմակին, իսկ երկրորդ անալոգաթվամշանային կերպափոխիչի չափման մուտքային սեղմակը միացված է լարման երկրորդ բաժանարարի ելքային սեղմակին:

Ապահովվում է չափիչի կառուցվածքի պարզեցումը, 1 նկ.:

- (51) 7 G01N 23/02 (11) 1440 (13) A2
H01L 21/66
(21) P20030021 (22) 26.02.2003
(42) 11.04.2003
(71) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (AM)
(72) Սուրեն Խուրազբերդյան(AM), Հայկ Հարությունյան (AM), Կարեն Ղարիբյան(AM), Աշոտ Քոչարյան(AM), Ժաննա Դոխտյան (AM)
(73) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Երեւան, Տերյան 105(AM)
(54) Կիսահաղորդչային կառուցվածքների ծավալային լիցքերով տիրույթի լայնության որոշման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է կիսահաղորդչային տեխնիկային եւ կարող է կիրառվել կառուցվածքների չքայքայող հսկման համար, գիտական հետազոտություններում:

Ըստ եղանակի երկարգելք կիսահաղորդչային կառուցվածքը տեղադրում են մոնոքրոմատորի ելքում, փոփոխելով ընկնող ճառագայթի ալիքի երկարությունը, լուսահոսանքի արժեքը հավասարեցնում են զրոյի եւ որոշում բազայի կլանման գործակիցը, իսկ ծավալային լիցքերով տիրույթի լայնությունը որոշում են հետեւյալ հավասարումից՝

$$X_m = (1/\alpha) \ln 2 - (1/\alpha) \ln(1+e^{-\alpha d}),$$

որտեղ X_m -ը՝ ծավալային լիցքերով տիրույթի լայնությունն է, α -ն՝ բազայի կլանման գործակիցը, d -ն՝ բազայի շերտի լայնությունը:

Հնարավոր է դառնում փորձնական ճանապարհով որոշել կիսահաղորդչային կառուցվածքներում ծավալային լիցքերով տիրույթի լայնությունը, 2նկ.:

(51) 7 G01N 27/02 (11) 1441 (13) A2
(21) P20030052 (22) 16.04.2003
(42) 11.07.2003

(71) Արսեն Ադամյան(AM), Ջավեն Ադամյան(AM), Վլադիմիր Հարությունյան(AM), Հայկ Ասրիյան (AM)

(72) Արսեն Ադամյան(AM), Ջավեն Ադամյան(AM), Վլադիմիր Հարությունյան(AM), Հայկ Ասրիյան (AM)

(73) Արսեն Ադամյան, Երեւան, Օրբելի եղբայրների 6, բն. 34(AM), Ջավեն Ադամյան, Երեւան, Օրբելի եղբայրների 6, բն. 34(AM), Վլադիմիր Հարությունյան, Երեւան, Նալբանդյան 17, բն. 18(AM), Հայկ Ասրիյան, Երեւան, Դավիթ Անհաղթի 23/1, բն. 15

(54) Ծխի աղսորբային դետեկտոր

(57) Գյուտը վերաբերում է հակահրդեհային պաշտպանության եւ ազդանշանային միջոցների բնագավառին, մասնավորապես՝ ծխի էլեկտրոնային դետեկտորներին, եւ կարող է կիրառվել հրդեհների վաղ հայտնաբերման եւ ազդարարման նպատակով:

Դետեկտորն ունի ծխի տվիչ, ազդանշանի կերպափոխման սխեմա եւ հաստատուն հոսանքի սնման աղբյուր: Ծխի տվիչն ունի դիէլեկտրական տակդիր, տակդիրի վրա մետաղական էլեկտրոդներ, վերջիններիս վրա որպես զգայուն շերտ նստեցված եւ այնուհետեւ օդի միջավայրում թրծված մետաղաօքսիդային կիսահաղորդչային թաղանթ:

Դետեկտորը լրացուցիչ ունի սնման աղբյուրին միացված, մեկուսիչ հիմքի վրա փաթաթված բարձրածն հաղորդալարից էլեկտրական ջեռու-

ցիչ, որը ծխի տվիչի զգայուն շերտի մակերեսային նկատմամբ տեղադրված է բացակով: Աղսորբվող գազի նախնական տաքացումը մինչեւ զգայուն շերտի ջերմաստիճանը գերազանցող ջերմաստիճանները ապահովվում է բացակի մեծությամբ, ընդ որում տվիչի զգայուն շերտի ջերմաստիճանը բարձր է շրջապատող միջավայրի ջերմաստիճանից 40-50°C-ով, 3 նկ.:

(51) 7 G01R 17/10 (11) 1442 (13) A2
(21) P20030024 (22) 03.03.2003
(42) 13.05.2003

(71) Բորիս Մամիկոնյան(AM), Արշակ Շաղգամյան (AM), Խորեն Մամիկոնյան(AM)

(72) Բորիս Մամիկոնյան(AM), Արշակ Շաղգամյան (AM), Խորեն Մամիկոնյան(AM)

(73) Բորիս Մամիկոնյան, Գյումրի, Ն.Շնորհալու 25, բն.24(AM), Արշակ Շաղգամյան, Երեւան, Կուզնեցովի 10, բն. 4(AM), Խորեն Մամիկոնյան, Գյումրի, Ն.Շնորհալու 25, բն.24(AM)

(54) Դիմադրության աճի չափիչ

(57) Գյուտը վերաբերում է էլեկտրաչափողական տեխնիկային եւ նախատեսված է դիմադրության աճը հաստատուն հոսանքով չափելու համար:

Չափիչն ունի հաստատուն լարման աղբյուր, համեմատման ռեզիստոր, հաստատուն լարման երկու ուժեղարար՝ ուղիղ եւ շրջող մուտքերի սեղմակներով, չափման մուտքային եւ հեմանիշային լարման սեղմակներ ունեցող, երկտակտ ինտեգրումով անալոգաթվանշանային կերպափոխիչ, թվանշանային ցուցասարք: Հաստատուն լարման աղբյուրին հաջորդաբար միացված են համեմատման ռեզիստորը, հաստատուն լարման առաջին ուժեղարարի մուտքային սեղմակները, որոնցից ուղիղ մուտքի սեղմակը համեմատման ռեզիստորի սեղմակներից մեկի հետ հողանցված է: Չափման օբյեկտը քառալար կապի գծով միացված է առաջին ուժեղարարի հետադարձ կապի շղթայում: Հաստատուն լարման երկրորդ ուժեղարարի ուղիղ մուտքի սեղմակը միացված է առաջին ուժեղարարի ելքային սեղմակին, շրջող մուտքի սեղմակը՝ համեմատման ռեզիստորի չհողանցված սեղմակին: Ըստ գյուտի անալոգաթվանշանային կերպափոխիչի չափման մուտքային սեղմակը միացված է երկրորդ ուժեղարարի ելքային սեղմակին, իսկ հեմանիշային լարման սեղմակը՝ համեմատման ռեզիստորի չհողանցված սեղմակին:

Բարձրացվում է դիմադրության աճի չափման ճշգրտությունը, 2նկ.:

- (51) 7 G01R 31/12 (11) 1443 (13) A2
(21) P20030025 (22) 03.03.2003
(42) 13.05.2003
(71) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (AM)
(72) Մարատ Մաթեոսյան (AM), Տիգրան Փարվանյան (AM), Հայկ Հակոբյան (AM)
(73) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Երևան, Տերյան 105 (AM)
(54) Էլեկտրամեկուսչային կոնստրուկցիայի որակի գնահատման եղանակ
(57) Գյուտը վերաբերում է էլեկտրատեխնիկային, մասնավորապես՝ էլեկտրամեկուսչային կոնստրուկցիայի (ԷՄԿ) որակի գնահատմանը արտորբման գործակցի միջոցով:

Գյուտի էությունն այն է, որ ԷՄԿ-ի որակի գնահատման եղանակում, ըստ որի ԷՄԿ-ն առավելագույն հնարավոր լիցքավորում են, այնուհետև կարճ միացում են էլուստները եւ գրանցում ցուցմունքները, համաձայն գյուտի, կարճ միացումից հետո գրանցում են վերականգնվող լարման առավելագույն արժեքը՝ V_1 , նորից կատարում են կարճ միացում, կրկին գրանցում վերականգնվող լարման առավելագույն արժեքը V_2 , եւ հաշվարկում դիէլեկտրական արտորբման $DA = V_2/V_1$ գործակցից, ընդ որում գործընթացը կրկնում են մինչեւ դիէլեկտրական արտորբման գործակցի իրական արժեքին՝ $V_i/V_{i-1} = V_{i+1}/V_i$ (որտեղ $i=1,2,...,n$) հասնելը:

Բարձրացվում է չափման ճշտությունը, 2 նկ:

- (51) 7 G02F 1/00 (11) 1444 (13) A2
(21) P20030046 (22) 04.04.2003
(42) 11.06.2003
(71) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (AM), Երևանի պետական համալսարան (AM)
(72) Էդգար Զանունց (AM), Դավիթ Հակոբյան (AM), Նորիկ Զանունց (AM), Խաչատուր Ներկարարյան (AM)
(73) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Երևան, Տերյան 105 (AM), Երևանի պետական համալսարան, Երևան, Ալեք Մանուկյան 1 (AM)
